զի սկիզբն արասցեն գործոյն, եւ բարձցի խռովութիւնն 'ի միջոյ. և մնացեալքն հետեւապէս կատարեն գրով Բըդեշխին և կամ Տէրութեան։

Գնացին Հայք առ Դատաւորն և յետ բազում բանից՝ խոստանայր կատարել զոմանս ըստ հրովարտակին, և զոմանս 'ի վկայս առնէր ապաստան։ Հայք առաջի եդին նմա զայսոսիկ խնդիրս, առ ժամն սոքօք բաւականացեալ, զբանալի հիւսիսային դրան Այրին Ծննդեան Քրիստոսի, և զմին յերից դրանց 'ի մի կարգ եղելոց յեկեղեցւոջ անդ, զբանալի վայտեայ միջնադրան, որ արձանադրութեամբ սեփհական էր Հայոց. ճանապարհ 'ի վանաց մինչեւ յԱյրն, գնալ 'ի Ս. Աստուածածին ըստ առաջնոյն. կախել զմի շար կանթեղս, և զայլ չորս մշտակայ կանթեղս 'ի Ս. Յարութիւն, զմի կանթեղն 'ի Պատանատեղին՝ զոր յայիշատակեալ էին Յոյնք. կանգնել 'ի հիմանէ զիւղաբերից սեղանն, զոր խոպառ անհետ արարեալ էին, կախել զպատկերն 'ի վերայ դրան Գերեզմանին, և զչորեսին կանթեղս 'ի շրջապատս նորին, և յայլ տեղիս նոյնպէս զպատկերս և զկանթեղս, և չինել զխաչկալս խորանաց. թափել 'ի ձեռաց Յունաց՝ զտեղիս և զկանթեղս 'ի կողմն Յոսէփայ Արեմաթացւոյն, կնքել զտումարն քննութեան, և զգիրն հաստատութեան երից հետեւակ ազգաց, և տալ գիր անթերի կատարելոյ զամենայն ինչ՝ զորս գրեցաք. զի թէպէտեւ Հայք կամէին ըստ մնաց նոր հրովարտակին ամենայն իրօք հաւասար լինիլ Յունաց 'ի Ս. Ծնունդ և 'ի Ս. Աստուածածին, զի այն իսկ էր դիտաւորութիւն Արքայի. սակայն Դատաւորն չառնոյր յանձն կատարել զայնոսիկ՝ և հաւասար բաժանորդութեան հրաման տալ։ Յետ խօսելոյ 'ի վերայ առաջարկութեանցս այսոցիկ, ասէ Դատաւորն՝ զի՞նչ տայք, թէպէտ կաշառ ոչ ընդունիմ, այլ վասն կատարելոյ զգործս ձեր պարտ է առնել հաստատ սակարկութիւն, և այն եթէ յօժարեսցին սիրտք ձեր, և վերջապէս առաջարկէ նոցա տալ 100,000 դահեկան. Հայք առաջի եդին նմա զտկարութիւնս եւ զաղքատութիւնս լուրեանց, եւ աղաչէին վարիլ խնամով և գթութեամբ. այլ նա ոչ աղաչանաց լսէր և ոչ 'ի պահանջից զլջանէր. և յետ բազում բանից իմացեալ զկամակոր միտս նորա, եկեալ պատմեցին Թէոդորոս Պատրիարքի